

Կապի Հեղինակ Տեր Անտոն ՔՀՆ. Թանգիլյան

Ծնվել է 1975 թվականին, գեղատեսիլ լեռներով ու խորունկ ձորերով շրջապատված Հայաստանի Հաղպատ գյուղում:

1992-ին տեղական դպրոցն ավարտելուց հետո կրթությունը շարունակել է Երևանի Ինդուստրիալ մանկավարժական քոլեջում և ստացել Բակալավրի կոչում մանկավարժ դառնալու երազանքով: Սակայն երբեմն կյանքը մեզ տանում է այնպիսի վայրեր, որի մասին երևակայել անգամ չէինք կարող:

1995-ին նա ընդունվում է Երևանի Պետական Մանկավարժական Ինստիտուտ, երբ իր կյանքում արմատական փոփոխություն է տեղի ունենում: Կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատությունում շարունակելու փոխարեն, նա նախընտրում է անդամագրվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որպես հոգևորական ծառայելու հույսով: Նման կոչման իրականացման համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանական համայնքում յոթ տարիների երկար ընթացք էր պահանջվում:

Աստուծո ողորմութամբ նա ձեմարանն ավարտել է 2001 թվականի ամռանը, **“Ժամանակակից Կենսաբանության Բարոյաէթիկական Խնդիրների Վերլուծության Փորձ”** թեմայով թեզի պաշտպանությունից հետո (Այս աշխատության մեջ, որը կարող էք գտնել այս կապի STUDY հայերեն էջում, հեղինակը գաղափար է տալիս կենսաէթիկայի հիմնական յոթ խնդիրների մասին՝ հատկապես, մանրամասն կենտրոնանալով մարդկու կրոնավորման հնարավորության ու հավանական արդյունքների վրա):

2001 թվականի Հուլիսի 20-ին, Պայծառակերպության տոնի առիթով նա կոչվել է Սարկավագության հոգևոր աստիճանին և ծառայության նշանակվել Մայր Աթոռի տեղեկատվական կենտրոնի “Շողակաթ” հեռուստաընկերությունում, վարելու **“Եկեղեցական կյանք”** հաղորդաշարը և հոգևոր երկու ռադյո ծրագրեր Երևանի կենտրոնական կայաններով:

2002 թվականին նա ընդունվում է Մեծն Բոստոնի **“Սուրբ Խաչ”** Հույն Ուղղափառ Եկեղեցու Բարձրագույն Աստվածաբանական դպրոցը: Այստեղ նա 2005 թվականին ստացել է **“Աստվածաբանական ուսուցումների Մագիստրոսի”** կոչում:

2009 թվականին նա սկսել է **“Առողջ Մտքերի Խնջուկք”** հեռուստատեսային հաղորդաշարը, որ եթեր է արձակվում Մասաչուսեթս նահանգի շուրջ յոթ համայնական հեռուստակայաններով (Այդ հաղորդումները կարելի դիտել այս կապի Media էջում): Նույն տարվա վերջում նա պաշտոնապես միացավ Ամերիկայի Հույն Ուղղափառ Եկեղեցուն դառնալով Նոր Հեմպշիրի Սբ. Նիկողայոս համայնքի անդամ:

2010 թվականին նա վերադառնում է “Սուր Խաչ Աստվածաբանական Դպրոց” և 2011-ին ամբողջացնում “Աստվածաբանության Մագիստրոսի” կոչման դասընթացները:

Տեր Անտոն ՔՀՆ. Թանգիլյանը քահանայական սուրբ կոչմանն արժանացավ 2015 թվականի Հոկտեմբերի 26-ին Սուրբ Դիմիտրիոսի տոնի առիթով Բոստոնի Մեթոդիոս Սրբազան Մեսրոպոլիտենի ձեռամբ : 2015 թվականի Նոյեմբերի 1-ից նա նշանակվել է Մասաչուսեթսի փրբողի քաղաքի Սբ. Բարսեղ Հույն Ուղղափառ Եկեղեցու օգնական քահանայի պաշտոնին:

Տեր Անտոն ՔՀՆ. Թանգիլյանը երջանիկ հայր է իր հրաշալի ընտանիքի, կնոջ՝ Կելլիի և զավակների Միքայելի, Էլլայի և Դավիթի համար: